

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆՈՒՅԻ ՍՐԱՊՅԱՆ—«ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ»

Միջնադարյան հայ քնարերգության լավագույն ներկայացուցիչների գրական ժառանգության ամփոփ հրատարակությունն ու գիտական արժեքավորումը հայագիտության կարևորագույն մասնաճյուղն է: Ծաղկաբաղ-ժողովածուներում անհնար է սպառել միջնադարյան քնարերգության լիակատար բարելուրդումն ու զարգացման ուղիները:

Այլ ժողովուրդների անցյալին վերաբերող վկայությունների բազմությունն ու արժանահայտությունը մեր և օտարազգի հայագետներին զրդել են հատկապես պատմագրությամբ զբաղվելու Հայագիտության այս ճյուղն արդեն միջազգային ճանաչում է ստացել՝ ի պարծանս այն ստեղծող ժողովրդի: Ի այց նույնքան կարևոր ու միջազգային արժեք ներկայացնող է և մեր գեղարվեստական գրականությունը: Բազմավաստակ Մ. Արեղյանը «Հայ հին գրականության» երկու հատորը շարադրելիս հատկապես նշում էր առանձին հեղինակների վերաբերող մենագրությունների պակասը: Էլ չենք ասում, որ մեր 5—18-րդ դարերի գեղարվեստական արձակ, դեռ միայն իր հատակտորներով է հայտնի: «Միջնադարյան հայ տաղերգուներ» մատենաշարի շնորհակալ նախաձեռնումը արդեն լրացնում է այդ պակասը: Բանասեր Արմենուհի Սրապյանը նշված մատենաշարի հինգ գրքերից երկուսի հեղինակն է («Հովհաննես Երզնկացի» (1958 թ.) և «Կոստանդին Երզնկացի» (1962 թ.))՝ ուսումնասիրություն և բնագրեր ներառությամբ:

Կոստանդին Երզնկացու գրական ժառանգությամբ ու նրա արժեքավորմամբ զբաղվել են Ա. Զույանյանը, Մ. Պոտուրյանը, Մ. Արեղյանը, Հ. Քյուրտյանը, Մ. Մկրտչյանը և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը, մանավանդ Մ. Պոտուրյանը, իր արժանավոր ծառայությունն ունի: Ի այց տաղերգուի գրական դիմանկարը՝ համեմատական բնագրերի առկայությամբ, դեռ ամբողջական չէր: Այդ պատճառով էլ Արմենուհի Սրապյանի «Կոստանդին Երզնկացի» աշխատասիրությունը անհրաժեշտ ու արժեքավոր գործ է: Իրքն ունի Առաջաբան, Ուսումնասիրություն (4. Երզնկացի և իր տաղերը), Բանասիրական դիտողություններ, Տաղեր, Ծանոթագրություններ, Մատենագիտություն (կազմեց՝ Հ. Ս. Անասյան), Բառարան ու Գանկեր: Նշված բաժինները ամբողջականացնում են գիրքը և բանասիրական քննության սպառիչ հնարավորություն ստեղծում:

Երզնկան հայ մշակույթի երախտավոր օջախներից է: Տեղիս նշանակությունը հայ ժողովրդի ու նրա մտավոր քերթության պատմության մեջ առավել նշանավոր դարձավ մոնղոլական արշավանքների շրջանում: Ա. Սրապյանը հայ և օտար աղբյուրների (վերջինս ըստ Հ. Քյուրտյանի, «Երիզա և Եկեղյաց գավառ» ուսումնասիրության) վկայությունների հիմամբ ուրվագծում է, քաղաքի ու «աշխարհի» պատմությունը, սոցիալ-քաղաքական ու մշակութային իրավիճակը և, արդարացիորեն, ըստ այնմ արժեքավորում Երզնկացու տաղերի գեղարվեստական գաղափարական նշանակությունը: Աղանդավորական շարժումների ծավալումը, «երկրի նորատիպ հասարակական-քաղաքական կացությունը շփման ու փոխհարաբերության լայն հնարավորություն է ստեղծում» (էջ 29, նաև՝ էջ 51): Երզնկացի գործիչները, վարդապետներն ու տաղերգուները մերձավոր աղերս ունեին Կիլիկյան Հայաստանի, մանավանդ Հռոմկլայի հետ: Երզնկայի ամբողջության ու միջազգային նշանակության մասին (մոնղոլական շրջանում) ուշագրավ տեղեկություններ են հաղորդում, ի թիվս այլոց, նաև վրացական աղբյուրները, մասնավորապես XIV դարի անանուն «Ժամանակագրությունը»:

XIII—XIV դարերի հայ տաղերգության առավել աշխարհականացման ու 4. Երզնկացու քնարերգության հիմնական կոչմանն է նվիրված Ուսումնասիրություն բաժնի երկրորդ գլուխը: Երբ հեղինակը տաղերից վերցրած բազմաթիվ մեջբերումներով ապացուցում է, որ Երզնկացու մոտ տաղի կրոնական մասնակի երանգը հիրավի սոսկական է, իսկ հիմնականը (և նորը)

մարդկային փոխհարարություն, բնության ուղղակի ու հույժ ղեկարվեստական ընկալումն է: «Կոստանդին Երզնկացին է բնության ու սիրո այն առաջին տաղերգուն, որ բանաստեղծական խոսքի անկրկնելի վարպետությամբ ու զգացողությամբ հրգում է աշխարհը՝ ծառ ու ծաղիկ, վարդ ու բլբուլ, յույս և արև, սեր և ուրախություն, կին ու զինի: Նրա տաղերը հայ միջնադարյան աշխարհիկ պոեզիայի գարունն են, այն գարունը, որ լիովին մտնում է իր իրավունքների մեջ և ողջ բնությունը ողողում յույսով ու արևով, ևրփներանց դույններով, հորդառատ ջրերով, Կրկնի բույրերով ու թովչանքով — գրում է Ա. Սրապյանը, բավական տեղի տալով իր քննարկական ներշնչմանը:

Ջարմանալին միայն Երզնկացու բանաստեղծությունների աշխարհիկ բովանդակությունն ու թեմատիկ բազմազանությունը չէ, այլև՝ արտահայտչական կատարյալ զեղարվեստականությունը: Եթե Նարեկացու տաղերում բանաստեղծական կատարումը, այնուամենայնիվ, կարող էր իսկապես հոգևոր բովանդակություն վկայել, Կ. Երզնկացու մոտ որոշակիությունն արդեն նկատելի է և հոգևոր առումով հասկանալու կոչը չի ծրվում բովանդակությամբ: Արտահայտչական նկատելի ընդհանրությունները Նարեկացու և Երզնկացու տաղերում, անշուշտ վերջինի՝ իր գրական նախորդի ունենալն է վկայում: Բանասեր Ա. Սրապյանը բարեխղճորեն վեր է լուծել և այն տաղերը, որոնք կառուցվածքային ու թեմատիկ ընդհանրություն ունեն Սմար Խայամի քառյակների հետ: Հույժ գիտական է այդ ընդհանրությունների (գինուն, կնոջը, սատուրվակին վերաբերող հատվածներում) մեկնությունը. աշխարհիկ զգայությունների զարթոնքը և Երզնկայի ինքնատիպ գրական միջավայրը կարող էին մեծապես օժտյալ բանաստեղծին ինքնուրույնարար այդ եզրակացության տանել, թեև պարսից գրականության իմացությունը կարելի է առանց կասկածելու ընդունել: Երզնկացու այս բնույթի տաղերը մի այլ առավելություն էլ ունեն. բանասերները երբեմն Խայամի գինու տակ փորձում են սուֆիզմի այլարանություն տեսնել, մինչդեռ նման այլարանության առկայությունը հայ տաղերգուի մոտ ինքնին բացառվում է: Կ. Երզնկացու տաղերի մեջ, անշուշտ, առկա է ժողովրդական բանահյուսության ազդեցությունը: Որոշ համեմատություններ ու դարձվածքներ իրենց զուգահեռությունն ունեն միջնադարյան թղթայիններում, անկախ վերջիններիս պարսկական-արաբական սերումից: «Ե Շահնաբայի ձայն» գրված տաղը ևս այդ է վկայում: Ա. Սրապյանը ժողովրդական բանահյուսության ևնթաշնչուն որոնելիս հետաքրքիր հարցադրման է հանդում. «Արդյո՞ք հայ ժողովրդի սքանչելի վիպերգության՝ «Սասունցի Գավթի» ստեղծագործական մեթոդի ձևական ազդեցությունը չի արտահայտում տաղերգուի «Մի հաստալ ամէն մարդոյ» սկզբածրով բանաստեղծությունը» (էջ 83): Վկայակոչված հատվածը իրոք ուշագրավ է և, այն լրացնող մատենագրական այլ աղբյուրներ համադրելու դեպքում, կարելի է հարցադրմանը հայագիտության համար ուշագրավ պատասխան տալ:

Երզնկացու կենսագրությանը վերաբերող մասում (զլուխ կրթող) դժվար էր նորույթներ սպասել: Նախորդ բանասերների պես Ա. Սրապյանը ևս ստիպված է եղել այս ու այն վկայությունից կոհսումներ անել՝ հույժ տրամաբանական շարադրանքով:

Բանասիրական գիտությունները բաժինը տարբերվում է իր բնույթով թելադրվող կոնկրետությամբ: Մ. Պոտուրյանի որոշ պատճառարանություններ լրացվում են, իսկ նրա՝ Երզնկացուն վերադրած տաղերից մեկը հատկացվում Առաքել Սյունեցուն՝ պատշաճ ձևադրական մկայակոչությամբ (նույնն է արել և Ն. Ակինյանը):

Այս բաժնում, թվում է, պետք է քննվեն և որոշ զրույցների («Պատմություն պղնձի քաղաքի», «Հարցմունք աղջկան ընդ մանկան») աղբյուր Կ. Երզնկացու գրական ժառանգությանը: Հայպետներ Ն. Ակինյանը (1958 թ.) և Ն. Անդրիկյանը (1905—6 թթ.) լեզվա-ոճական զուգահեռներ են անցկացնում Երզնկացու տաղերի և նշած զրույցների միջև: Ն. Անդրիկյանի վկայակոչած բառերն ու դարձվածքները բավական մտահոգող են: Ա. Սրապյանը լրիվ շրջանցել է հարցը՝ հավանաբար ի սկզբանե անընդունելի համարելով: Բայց լեզվական ընդհանրությունը փաստ է, և զրքի հեղինակը պետք է բացահայտեր նրա առկայության պատճառը: Թերևս XIII—XIV դարի Երզնկայի ու այլ գավառների ժողովրդական-խոսակցական լեզվին հատուկ բառեր են դրանք անկախ միմյանցից գրական տարբեր ժանրեր թափանցած: Երզնկացու թարգմանիչ լինելու պնդումը, որ կատարվել է կես դար առաջ, այսօր չի հաստատվում: Բայց արևելյան այլ զրույցները, իսկ առ աշխարհիկ բովանդակությամբ, իրոք տարբերակվել ու պատմվել են հայոց մեջ: Հովհ. Որոտնեցին ստիպված է եղել վկայել նրանց առկայությունը՝ մերժելու հակումով:

Կ. Երզնկացին, ինչ խոսք, ծանոթ պիտի լիներ այդ զրույցներին, մանավանդ որ ինքը և «մարմնավոր» տաղեր գրելու համար հայածվել է: Այդ պատճառով էլ հարցադրմանը պետք էր պատասխանել:

Տաղերը հրատարակված են մինչ այս գոյություն ունեցող բոլոր տպագիր ու գրչագիր օրինակների համեմատությամբ: Ա. Սրապյանը գոյություն տարբերակել է բնագիրն ու տողատակին, հետևել բանաստեղծության չափին ու հնչյունական կատարելությանը:

4. Երզնկացու տաղերի այս հրատարակությունը հավաստի սկզբնաղբյուր է բարբառագիտությամբ ու հայոց լեզվի պատմությամբ զբաղվող մասնագետների համար: Ցանկալի էր, որ հեղինակը ինքը կատարեր բանասիրական աշխատանքը ևս: Տաղերից պարզ երևում է, որ 4. Երզնկացին օգտագործում է ինչպես դասական գրարարյան ձևը, այնպես էլ՝ տեղական խոսակցականը. օրինակ՝ «Յաղագս եղրաւուրթևան, բարույ և շարի», իսկ նույն տաղի այլ տողում ունենք «իմ աղբաւն է բլվաֆայ», ուր նույն բառի բարբառային ձևն է օգտագործված: Ոչ պակաս հետաքրքիր կլինեք նկատել փոխառյալ բառերի նոր երանգավորումը խոսակցական լեզվում և տաղերում. «Ձրմեռն բանդ էր և խաւար, զաւրուն էհաս ու նոր բանաւ» (էջ 117): «Բահարը» պարսկերեն է, որ նույնպես դարձն է նշանակում, բայց տվյալ դեպքում այն նույն դարձանամուտ իմաստն ունի: Հետաքրքիր էր պարզել նման երանգավորումը քնարերգուի՝ հնարանքն է, թե՛ խոսակցական լեզվին հատուկ փոխառություն: Կամ մի այլ օրինակ. «նա թրի իմ հոգոյ խօսքն—ի յիր սրտին ջումայ ղաղատ»: «Ձումայ» բառին հանդիպում ենք նաև Դր. Աղթամարցու մոտ «Ղաղատը» սուրբերեն-պարսկերեն «ղալաթ»—«սխալ» բառն է, որ վրացերենում ստացել է «ղալաճան» իմաստ: XI-րդ դարից սկսած դասական գրարարի «ձ»-ն դառնում է «ղ», որ ապացուցվում է բազմաթիվ վիմագիր արձանագրությունների հատուկ անունների վերծանմամբ: Նշանակում է «ղաղատ» ձևը՝ փխ. «ղալատ» կամ զրչի սխալ է, կամ նոր երանգ պետք է փնտրել («ղաղատ-ի» բառը հին վրացերենում «բարբառում» է նշանակում, հմմ. հյ. «աղաղակ-աղաղակ»)։

«Մտնոթագրություններ» բաժինը ամփոփում է աշխատությունը և ընթերցողին տեղեկացնում տաղի սյառմությունը: Մեր կարծիքով, աշխատանքը կշահեր, եթե այս բաժնում տրվեր բանասիրական դիտողություններ հատվածը, Ցանկալի էր, որ հեղինակը խուսափեր նաև որոշ կրկնություններից: Հ. Անասյանի կազմած Մատենագիտության մեջ տրվում են տաղերի բոլոր տպագրություններն ու նրանց սկզբնաղբյուրները, ուստի այլևս հարկ չկար ծանոթագրելիս կրկնել այն, կամ արդյո՞ք չէր կարելի օգտագործված օրինակները ներկայացնող պայմանական մի բնագրանուր նշանակում կատարել, որով կհնչտացվեր աշխատանքը:

Մեր դիտողությունները մասնակի են և չեն ստվերում Ա. Սրապյանի շնորհակալ աշխատասիրությունը: Միջնադարյան հայ տաղերգուների հրատարակությունը երկարաժամ ու զժվար աշխատանք է: Մատենաշարի հինգ զրբերը ապացուցում են, որ մեր բանասերները արդեն հաղթահարում են այդ զժվարությունը:

Մնում է մի այլ նախաձեռնություն ևս. շնորհալի թարգմանիչներին (իսկ նրանց համար պիտի հողալ) խորհուրդ տալ ուսերեն և այլ լեզուներով այլազգի ընթերցողներին ծանոթացնել ոչ թե մի կամ երկու տաղի, այլ զոնե յուրաքանչյուր լավագույն տաղերգուի «Հատընտրին»: Մեր պատմիչները վաղուց արդեն անցել են այդ ճանապարհը, իսկ տաղերգուները ոչ պակաս պատիվ կրեն մեր մշակույթին ու ժողովրդին:

Պ. ՄՈՒՐԱԳՅԱՆ